Հաստատված է

ՀՀ ԳԱԱ գիտակրթական

միջազգային կենտրոնի գիատական խորհրդի

«1»__փետրվարի__2021 թ. թիվ 151 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

_____Ա. Սարգսյան

ԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

Երևան-2021

1. Նշանակությունն ու կիրառման ոլորտը

1.1. Սույն կարգը հաստատում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական համակազմի գիտահետազոտական գործունեության վերաբերյալ ինֆորմացիայի հավաքման, մշակման և գնահատման գործընթացը:

1.2. Պրոֆեսորադասախոսական համակազմի գիտահետազոտական գործունեության գնահատման և վերլուծության նպատակն է դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքի գնահատումը և որակավորման աճի խթանումը:

1.3. Վերլուծության արդյունքները ղեկավար կազմի կողմից կարող են օգտագործվել որպես հիմք՝ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային պայմանագրի վերակնքման, երկարաձգման կամ խզման ժամանակ, նյութական և բարոյական աջակցության համար:

2.Կարգի նկարագրություն

2.1. Ընդհանուր դրույթներ

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության գնահատման և վերլուծության հիմնական նպատակն է Կենտրոնի կադրային գիտահետազոտական պոտենցիալի ուսումնասիրումը, գնահատումը, հետագա զարգացումը և կատարելագործումը:

Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության գնահատման և վերլուծության հիմնական խնդիրներն են՝

- Ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությունը արտացոլող տեղեկատվական բազայի ստեղծում և պարբերաբար թարմացում
- Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության ստուգման համար աուդիտի և մշտադիտարկման համակարգերի ստեղծում և կատարելագործում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքի մակարդակի և արդյունավետության գնահատման համար համակարգված միասնական չափանիշների մշակում:

- Գիտական և ուսումնամեթոդական աշխատանքի ուսումնասիրում, մշտադիտարկում և վերլուծություն:
- Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքում դասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանակներում նյութական և բարոյական խրախուսման համակարգի ձևավորում:

Տեղեկատվության հավաքումը, վերլուծության պատրաստումը, կադրերի զարգացման միջոցառումների կազմակերպումն իրականացնում է ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենը:

Գնահատման անցկացման ժամկետները որոշվում են տնօրենի հրամանով:

2.2. Տեղեկատվության հավաքում, գնահատում և վերլուծության պատրաստում

- Գնահատման հիմք են հանդիսանում դասախոսական կազմի գործունեության արդյունքները գիտահետազոտական ոլորտում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքման համար մշակվում է գնահատման ձևաթերթիկ **(տե՛ս Հավելված 1)**, որն արտացոլում է դասախոսի գիտահետազոտական ամբողջ գործոնեությունը:
- Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման ձևաթերթիկը կազմվում է երեք բաժնից՝
  1. դասախոսի ձեռքբերումները գիտահետազոտական աշխատանքի ընթացքում:
  2. Դասախոսի ստեղծագործական ակտիվությունը գիտահետազոտական ոլորտում հաշվետու ժամանակաշրջանում:
  3. Դասախոսի ստեղծագործական ակտիվությունը ուսումնամեթոդական աշխատանքում հաշվետու ժամանակաշրջանում:
- Տվյալ ձևաթերթիկի հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի հրամանով կազմակերպվում է պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումը:

- Գնահատման համար ելակետային տվյալները ցուցանիշների տեսքով դասախոսի կողմից մուտքագրվում են համապատասխան ձևաթերթի մեջ:

2.3. Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման համակարգի ձևավորում

2.3.1. Յուրաքանչյուր դասախոս կամ աշխատակից լրացնում է ուսումնական տարվա ընթացքում իր գիտահետազոտական գործունեության վերաբերյալ անհատական տվյալները (ցուցանիշները) ձևաթերթիկի մեջ:

2.3.2. ԳԿՄԿ ամբիոնները իրականացնում են լրացված տվյալների ամբողջականության և օբյեկտիվության ստուգում: Յուրաքանչյուր ամբիոնի դասախոսական կազմի գիտակրթական գործունեությունը, արտացոլված ցուցանիշների **(տե՛ս Հավելված 2)** տեսքով, յուրաքանչյուր ուստարվա ավարտին ներկայացվում է ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենին (քաղվածք ամբիոնի համապատասխան նիստի արձանագրությունից՝ կցելով լրացված ձևաթերթիկը):

2.3.3. Անհրաժեշտության դեպքում ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից իրականացվում է ստացված վիճակագրական տվյալների հստակեցում և ճշգրտում:

2.3.4. Ներկայացված տվյալները մուտքագրվում են գիտահետազոտական աշխատանքներիտվյալների բազայում:

2.3.5. Գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի ղեկավարությամբ իրականացվում է վերջնական վերլուծություն, և արդյունքները աղյուսակային և անալիտիկ հաշվետվության տեսքով ներկայացվում են տնօրենին և ամբիոնների վարիչներին՝ կադրերի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված օպերատիվ որոշումների կայացման և միջոցառումների կազմակերպման համար:

2.3.6. Առավել բարձր ցուցանիշներ ունեցող կադրերի ցուցակը ներկայացվում է տնօրենին՝ բարոյական և նյութական խթանման համակարգի մեջ ներառելու համար:

2.3.7. Գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից տնօրենին ներկայացվումեն առաջարկություններ՝ գնահատման համակարգում շտկումների և փոփոխություններ կատարելու համար:

2.3.8. Տվյալների բազաների թարմացումն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար: Տվյալների թարմացումը և դրա վերահսկումնիրականացվում է ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից:

3. Պատասխանատուներ և իրավասություններ

Կարգի իրականացման համար պատասխանատու են ԳԿՄԿ ամբիոնները և ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԵՎԱԹԵՐԹ

№	Անվանումը	Տպագիր	Հրատարակչություն	Էջ/ք	Համահեղինակ
1.					-
Սպասվող հրապարակումներ					
Գիտական այլ գործունեություն (Զեկուցում համաժողովում կամ գիտաժողովում)					
Գիտական թեմաներում ընդգրկվածություն					

Հեղինակ՝ /անուն, ազգանուն, ստորագրություն/

Ամբիոնի վարիչ՝ /անուն, ազգանուն, ստորագրություն/

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Դասախոսական կրեդիտներ

2021 թ. սեպտեմբերից ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ամար սկսվում է որակավորման բարձրացման հնգամյա շրջափուլ, որն ավարտվելու է 2025 թ-ի հունիսին:

Ծրագիրն ունի երկու բաղադրիչ՝ կրթական և հետազոտական-մեթոդական՝ իրենց ենթաբաղադրիչներով և դրանց հատկացվող կրեդիտային ծավալով:

Դասախոսը 5 տարում պետք է հավաքի առնվազն 30 կրեդիտ: Կրթական պարտադիր բեռնվածությունը 10 կրեդիտ է: Հետազոտական-մեթոդական պարտադիր բեռնվածությունը 20 կրեդիտ է:

Մոդուլ Կրթական/ հետազոտական	Գնահատման ձևը	Կրեդիտների քանակը	Միավոր մոդուլի համար սահմանված նվազագույն կրեդիտը
Ա. Կրթական կառուցամաս	Յուրաքանչյուր 30 ժամը հավասար է 1 կրեդիտի		10
1.Ընդհանուր պատրաստություն, որից -անգլերենը ակադեմիական միջավայրում, ըստ մակարդակների -տեղեկատվական տեխնոլոգիաներ, ըստ մասնագիտությունների	 Հավաստագիր /քննություն Հավաստագիր /քննություն	 3 4	7

2. Մանկավարժա-հոգեբանական պատրաստություն (դասավանդման և գնահատման ժամանակակից մեթոդներ, կրթական ծրագրերի մշակման հիմունքներ և այլն)	Հավաստագիր /քննություն		**1**
3. Մասնագիտական պատրաստություն (վերապատրաստում, ամառային դպրոց և այլն)	Հավաստագիր		**2**
Բ. Հետազոտական - մեթոդական կառուցամաս			**20**
1.Հրապարակումներ, որից -Գիտական հոդված միջազգային գրախոսվող հանդեսում -Հոդված ԲՈԿ-ի ցանկի հանդեսում -Ուսումնամեթոդական հոդված -Ուսումնական ձեռնարկ -Դասագիրք -Մենագրություն	**Փաստացի հրապարակումը**	 3 1 1 5 10 10	
2. **Զեկուցում համաժողովում, աշխատաժողովում, գիտաժողովում**	**Հավաստագիր/ հրապարակում կամ էլ.հղում**	1	

3. Ատենախոսության պաշտպանություն -դոկտորական -թեկնածուական	**Վկայագիր**	 10 6	

5 տարում դասախոսի ձեռք բերած կրեդիտների ընդհանուր քանակը չի կարող պակաս լինել 30 կրեդիտից:

Ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ: